

TELCELL

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի
2026 թ. 2-րդ եռամսյակի
հաշվետվություն

14.08.26

Բովանդակություն

■	<u>Կառավարման մարմինների միջանկյալ գեկույց</u>	<u>3</u>
■	<u>Կորպորատիվ իրադարձություններ</u>	<u>3</u>
■	<u>Տերմինալային ցանցի զարգացում</u>	<u>5</u>
■	<u>Բջջային հավելվածի զարգացում</u>	<u>7</u>
■	<u>Կադրային քաղաքականություն</u>	<u>11</u>
■	<u>Ֆինանսական վերլուծություն</u>	<u>13</u>
■	<u>Ռիսկեր և անորոշություններ</u>	<u>18</u>
■	<u>Ռազմավարություն և զարգացման միտումներ</u>	<u>19</u>
■	<u>ՖՀՄՍ հաշվետվություն</u>	<u>21</u>
■	<u>Պատասխանատու անձանց հայտարարություն</u>	<u>27</u>

Կարևոր իրադարձությունների նկարագիր

1. Կորպորատիվ իրադարձություններ

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով

«ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը նշանակված է եղել 2026 թ. հունիսի 25-ին՝ ժամը 15:00-ին: Ժողովն անցկացվել է համակցված ձևաչափով՝ ֆիզիկական և առցանց (հեռավար) մասնակցությամբ: Ֆիզիկական մասնակցությունը կազմակերպվել է ք. Երևան, Խակոբի 11 հասցեում գտնվող «ՖՈՒԴՊԱՐԿ ԲԱՅ ԴԱՌՆԹԱՌՆ» կենտրոնում, իսկ առցանց մասնակցությունը՝ YouTube հարթակի միջոցով ուղիղ հեռարձակմամբ:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 2026 թ. մայիսի 29-ի դրությամբ:

Օրակարգային հարցեր և կայացված որոշումները.

- Տարեկան և ֆինանսական հաշվետվությունների հաստատում.** Օրակարգով ներկայացվել և հաստատվել են «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2025 թ. տարեկան հաշվետվությունը, ինչպես նաև արտաքին աուդիտի («ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ) կողմից հաստատված 2025 թ. ֆինանսական հաշվետվությունները:
- Հահույթի բաշխում և շահութաբաժիններ.** Ընկերության 2025 թ. զուտ շահույթը կազմել է 992,170,000 ՀՀ դրամ: Որոշվել է որպես տարեկան շահութաբաժին վճարել ընդհանուր 767,140,000 ՀՀ դրամ (շահույթի 77.32%-ը), որը կազմում է 22 ՀՀ դրամ յուրաքանչյուր 1 բաժնետոմսի դիմաց:
- Գովազդային վիճակախաղի հիմնադրամի ստեղծում.** Ընկերության ծառայությունների և բրենդի ճանաչելիության բարձրացման նպատակով ստեղծվել է 2026 թ. գովազդային վիճակախաղի տարեկան շահույթային հիմնադրամ՝ 20,000,000 ՀՀ դրամի չափով:
- Կանոնադրության փոփոխություններ.** Փոփոխությունները պայմանավորված են եղել ՀՀ Կենտրոնական բանկի Կանոնակարգ 17/02-ում կատարված փոփոխություններով, որոնք ուժի մեջ են մտնում 2026 թ. սեպտեմբերի 1-ից: Ըստ նոր կանոնադրության՝ Էմիսիոն եկամտի օգտագործումը սահմանափակվել է բացառապես անվճարունակության դեպքում կորուստների ծածկման, կապիտալի նվազեցման կամ բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման դեպքերով:

Փոփոխություններ մասնաճյուղերի ցանցում

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի Տնօրենների խորհրդի 20.06.2025 թվականին որոշմամբ Ընկերության «Ավան» մասնաճյուղը (ՀՀ, ք. Երևան, Հ. Յովհաննիսյան թաղ. 24/7 հասցեում գտնվող, հաշվառման համարը՝ Մ-5/33) 2026թ. մայիսի 01-ից փակ է:

2. Տերմինալային ցանցի զարգացում

2026 թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Telcell ընկերության «Տերմինալների ցանցի զարգացման և գործընկերների ներգրավման բաժինը» շարունակել է համակարգային բարելավումներն ուղղված ցանցի արդյունավետության, ծառայությունների հասանելիության և եկամտաբերության աճին:

Շարունակական բարելավում

1. Տերմինալները համալրվել են քարտ ընթերցող սարքավորումներով, ինչը հնարավորություն է տվել իրականացնել հաճախորդների նույնականացում բանկային քարտի հպման միջոցով: Միաժամանակ, բանկային քարտին փոխանցում կատարելիս ներդրվել է քարտի տվյալների ավտոմատ ընթերցման և լրացման գործառնություն, ինչը զգալիորեն պարզեցրել և արագացրել է վճարման գործընթացը:

2. Հաշվետու ժամանակահատվածում առկա նույնականացման գործընթացների հետ կապված մարտահրավերն օպերատիվ կերպով կառավարվել և հաջողությամբ հաղթահարվել է՝ ապահովելով ծառայությունների անխափան շարունակականությունը և ռիսկերի վերահսկելի մակարդակը:


3. Օրենսդրական փոփոխությունների շրջանակում, որոնց համաձայն բժշկական ծառայությունների վճարումները պետք է իրականացվեն «Արմեդ» համակարգի միջոցով, իրականացվել է ինտեգրում «Արմեդ» համակարգի հետ, որի արդյունքում Telcell համակարգին միացվել է թվով 49 բժշկական հաստատություններ:

4. Շարունակվել են տերմինալների տեղակայման, օպտիմալացման և նպատակային տեղափոխությունների աշխատանքները: Չուգահեռաբար իրականացվել են տեխնիկական և գործառնական բարելավումներ՝ ապահովելով կայուն աշխատանք և խափանումների նվազեցում:

Գործընկերային ցանցի ընդլայնում

■ Տերմինալային բիզնեսի զարգացումը

- Ընդհանուր՝ 4915 տերմինալ:
- Երկրորդ եռամսյակի ընթացքում նոր վայրերում տեղադրվել է 135 տերմինալ:
- Գյուղերում տեղադրված տերմինալների քանակը՝ 1188:
- Մարզերում տեղաբաշխված է Ընկերության տերմինալային ցանցի 54%-ը:



3. Բջջային հավելվածի զարգացում

Օգտատերերի բազա

- Նոր նույնականացված օգտատեր՝ 19,182:
- Telcell Wallet-ի միջոցով բացված բանկային հաշիվների/քարտերի ընդհանուր թիվը եռամսյակում.
- բացվել է մոտ 21,000 բանկային հաշիվ,
- թողարկվել է մոտ 10,000 Visa թվային քարտ:

Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) հետ համագործակցությունը

Ընկերությունը շարունակում է ընդլայնել իր գործընկերների ցանցը՝ աջակցելով փոքր ու միջին բիզնեսներին իրենց մատուցած ծառայությունների դիմաց վճարումները ընդունել Telcell վճարային համակարգի միջոցով՝ թե՛ օֆլայն, թե՛ օնլայն տիրույթներում:

Telcell համակարգերի միջոցով վճարումներ իրականացնող ՓՄՁ-ներ

- **Էլեկտրոնային փողով վճարումներ QR գործիքով.** ավելի քան 5031 ՓՄՁ:
- **E-commerce հարթակներում Էլեկտրոնային փողով վճարումներ** (կայք/հավելված). օնլայն հարթակներում ծառայություն մատուցող ավելի քան 613 ՓՄՁ:
- **Telcell համակարգով** (Telcell Wallet-ում) վճարումների ընդունում. ավելի քան 670 ծառայության դիմաց:
- **PartPay (BNPL).** շուրջ 1160 գործընկեր իրենց վաճառակետերում և առցանց հարթակներում առաջարկում են «Գնիր հիմա, վճարիր հետո» ձևաչափով վճարման հնարավորություն: Վերջիններս իրենց վաճառակետերում ներդրել են Telcell Wallet-ի վճարային գործիքները, ինչը հաճախորդներին հնարավորություն է տալիս կատարել գնումներ՝ վճարումը **բաժանելով մասերի** (Ընկերության գործընկեր վարկային կազմակերպության միջոցով ապառիկ վարկավորմամբ):
- **100% by Telcell լիցքավորման սարքեր.** գործում է 431 կայան, որոնցից օգտվելու վճարումներն իրականացվում են բացառապես Telcell Wallet-ի միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում Telcell համակարգերին միացած ծառայություններ մատուցողների քանակը

- **Էլեկտրոնային փողով վճարումներ QR գործիքով.** ցանցն ընդլայնվել է 50 նոր ՓՄՁ-ով, որոնք ներդրել են Էլեկտրոնային փողով անհատական վճարումների QR գործիքակազմը:
- **E-commerce հարթակներում Էլեկտրոնային փողով վճարումներ** (կայք/հավելված). 13 նոր օնլայն հարթակներ (կայքեր և հավելվածներ) ինտեգրել են Telcell վճարային լուծումները՝ ապահովելով թվային գործարքների հասանելիություն իրենց հաճախորդների համար:
- **Telcell համակարգով** (Telcell Wallet-ում). հավելվածի միջոցով վճարումների ընդունման համակարգին է միացել շուրջ 20 նոր ծառայություն մատուցող:
- **Telcell համակարգով** (տերմինալի միջոցով). վճարումների ընդունման համակարգին է միացել շուրջ 78 նոր ծառայություն մատուցող:
- **100% by Telcell լիցքավորման սարքերի կայաններ.** հաշվետու ժամանակահատվածում տեղադրվել է 79 նոր կայան, որոնց օգտին վճարումներն ընդունվում են Telcell Wallet-ով:
- **PartPay (BNPL).** ընդլայնվել է **PartPay ծառայության** ձևաչափով համագործակցող գործընկերների ցանկը՝ համալրվելով 174 նոր ծառայություն մատուցողներով:

Մարզային ծածկույթ

Telcell-ը շարունակում է ակտիվ աշխատանքները մարզային ՓՄՁ-ների ներգրավման ուղղությամբ: Հաշվետու ժամանակահատվածում Երևանից դուրս գտնվող տարածքներում նոր միացած ծառայություն մատուցողների տեսակարար կշիռը կազմել է.

- **Էլեկտրոնային փողով վճարումներ QR գործիքով.** 17 նոր ՓՄՁ:
- **100% by Telcell լիցքավորման սարքեր.** տեղադրվել է 34 նոր կայան:
- **PartPay (BNPL).** 71 նոր գործընկեր մարզերում սկսել է կիրառել PartPay (BNPL) ծառայությունը՝ հնարավորություն տալով տեղի բնակիչներին օգտվել մաս-մաս վճարման գործիքակազմից:

Ակտիվ օգտատերեր

Հաշվետու ժամանակահատվածում ակտիվ օգտատերերի միջին թիվը հասել է շուրջ 221,000-ի:

Գործընկեր բանկերի վարկային պրոդուկտների տրամադրման հնարավորության մեկնարկը Telcell Wallet հավելվածի միջոցով

«Գուրու» կարգավիճակ ունեցող օգտատերերի համար ֆինանսական հասանելիության ընդլայնման շրջանակում գործարկվել է վարկավորման նոր համակարգ՝ «Կամուրջ» ՈւՎԿ-ի հետ համատեղ, իսկ գործող գործընկեր «ՀայԷկոնոմբանկ»-ի հետ բարելավվել են պայմանները: Այսուհետ օգտատերերը հնարավորություն ունեն Telcell Wallet-ի միջոցով վարկյանների ընթացքում դիմել և ստանալ վարկային միջոցներ, որոնք ակնթարթորեն փոխանցվում են անմիջապես օգտատիրոջ Telcell Wallet-ի Visa թվային քարտին կամ հաշվեկշռին՝ ապահովելով անխափան թվային փորձառություն:

Տերմինալով գործարք իրականացնող օգտատերերի նույնականացման համակարգի ներդրման գործընթացի ակտիվ գործարկումը

Ապահովվել է տերմինալային ցանցով բանկային պրոդուկտներին ուղղված վճարումների հարմարավետ և անվտանգ իրականացումը՝ ներդրված նույնականացման նոր մեթոդների և բանկերի հետ իրականացված ինտեգրացիաների միջոցով՝ միաժամանակ ապահովելով Կենտրոնական բանկի նոր կարգավորիչ պահանջների համապատասխանությունը՝ վճարողի պարտադիր նույնականացման մասով: Ներդրվել է նույնականացման ընդլայնված գործիքակազմ՝ ներառելով QR կոդի սքանավորում՝ Telcell Wallet և բանկային հավելվածների (Ամերիաբանկ, Արդշիրբանկ) միջոցով, Telcell Wallet Push նույնականացում, ինչպես նաև բանկային քարտերով և imID համակարգով նույնականացում: Իրականացվել են նաև բանկերի հետ ինտեգրացիաներ՝ վճարողի և ստացողի տվյալների անվտանգ փոխանակման համար:

Ճառայությունների մատուցման նոր սակագնային քաղաքականության ներդրում և կիրառում:

Բանկային փոխանցումների համար ներդրվել է նոր սակագնային քաղաքականություն՝ 2026թ. հունիսի 15-ից փոփոխելով միջնորդավճարների չափերը. 10,000 դրամը գերազանցող գործարքների համար սահմանվել է 500 դրամ միջնորդավճար՝ նախկին 400 դրամի փոխարեն:

Ընկերության տերմինալներում օգտատիրոջ անձնական էջի գործարկում՝ My Telcell:

Ընկերության Էկոհամակարգային լուծումների զարգացում՝ տերմինալներում անձնական էջերի ներդրման միջոցով: Մասնավորապես՝ ավարտական փուլում Է գտնվում My Telcell անձնական էջի լուծումը, որի գործարկմամբ օգտատերերին հասանելի կլինի նույնականացված անհատական միջավայր՝ վճարումների կառավարման, գործարքների պատմության դիտարկման և ավելի հարմարավետ սպասարկման հնարավորություններով:


Միաժամանակ նախատեսվում է ներդնել բանկերի համար նախատեսված անձնական էջի ուղղություն՝ հնարավորություն տալով բանկերի հաճախորդներին տերմինալներում ունենալ անհատականացված միջավայր՝ հասանելի ծառայություններով, գործարքների պատմությամբ և բանկային պրոդուկտներին ուղղված գործողություններով:

Ընկերության սպասարկման օղակների թվայնացման շրջանակում նախատեսվում է ներդնել chatbot լուծում՝ օգտատերերի սպասարկման գործընթացների թվայնացման, հաճախակի հարցերի արագ լուծման և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության բարձրացման նպատակով:

Նախագիծը դեռևս գտնվում է ակտիվ թեստավորման և ֆունկցիոնալ բարելավման փուլում՝ ծառայությունների մատուցման առավելագույն ճշգրտություն և արդյունավետություն ապահովելու նպատակով:

MY TELCELL

Նոր հնարավորություններ
Telcell Terminal-ում



TELCELL
TERMINAL

TELCELL
WALLET

Ծառայությունների խթանման ակցիաներ

- I.* Ապրիլի 7-ին Yandex Taxi և Yandex Delivery ծառայություններից Telcell Wallet-ի Visa թվային քարտով օգտվող հաճախորդների համար գործել է 50% զեղչ: Առաջարկի նպատակն էր ակտիվացնել Visa թվային քարտի օգտագործումը տաքսիի և առաքման թվային ծառայություններում և խթանել քարտի կապակցումը Yandex Go հավելվածին: Արդյունքում հաճախորդներին տրամադրվել է նշված ծառայություններից ավելի շահավետ օգտվելու հնարավորություն, իսկ Telcell Visa-ն ներկայացվել է որպես արագ և հարմար առցանց վճարային գործիք:
- II.* Ապրիլի 25-ից մայիսի 25-ը Yandex Go հավելվածի Food բաժնում գործել է 3000 դրամի պրոմո կոդի առաջարկ: Telcell Visa թվային քարտով առնվազն 4000 դրամ արժողությամբ երեք պատվեր վճարելու դեպքում հաճախորդը ստացել է 3000 դրամի պրոմո կոդ՝ հաջորդ պատվերի ժամանակ օգտագործելու համար: Ակցիայի նպատակն էր խթանել Telcell Visa թվային քարտի կիրառումը սննդի առաքման և e-commerce սեգմենտում: Արդյունքում ստեղծվել է թվային քարտով պարբերական վճարումներ կատարելու լրացուցիչ մոտիվացիա և ամրապնդվել է քարտի կիրառելիությունը Yandex Go էկոհամակարգում:
- III.* Ապրիլին իրականացվել է Telcell Visa թվային քարտի հաղորդակցական արշավ՝ «Մեկ քարտ՝ բոլոր գնումների համար» ուղերձով: Արշավի նպատակն էր ներկայացնել անվճար թվային քարտի ունիվերսալությունը և բարձրացնել իրազեկվածությունը Apple Pay-ի և Google Pay-ի միջոցով վճարումների հնարավորությունների մասին: Արդյունքում Telcell Visa-ն դիրքավորվել է որպես առօրյա, օնլայն և օֆլայն գնումների համար նախատեսված միասնական վճարային գործիք:
- IV.* Մայիս և հունիս ամիսներին շարունակվել է PartPay ծառայության ակտիվ առաջխաղացումը: Հրապարակվել են ծառայության օգտագործման քայլերը, գործընկերների որոնման եղանակները և մինչև 2 000 000 դրամ սահմանաչափով գնումները 3 ամսում՝ 0% տոկոսադրույքով վճարելու հնարավորությունը ներկայացնող նյութեր: Արշավի նպատակն էր բարձրացնել «գնիր հիմա, վճարիր հետո» ծառայության ճանաչելիությունը և խթանել այն գործընկեր վաճառակետերում որպես հասանելի վճարման տարբերակ: Արդյունքում հաճախորդներին ներկայացվել է բարձրարժեք գնումների ծախսերը մասերի բաժանելու պարզ մեխանիզմ, իսկ PartPay-ը դիրքավորվել է որպես Telcell Wallet-ի վարկային էկոհամակարգի հիմնական գործիքներից մեկը:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործման շրջանակում առաջնային տեղ է հատկացվում արդյունավետ կադրային քաղաքականության վարմանը: Այն ուղղված է անձնակազմի կառավարման արդյունավետ համակարգի ստեղծմանը, որն ապահովում է Ընկերության ռազմավարական նպատակների իրագործումը:

Կադրային քաղաքականությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

- **Արդարություն և հավասար հնարավորություններ.** աշխատակիցները պետք է ունենան հավասար իրավունքներ ու հնարավորություններ՝ անկախ սեռից, ազգությունից, կրոնից կամ այլ անհատական հատկանիշներից:
- **Մասնագիտական զարգացում.** ստեղծվում են պայմաններ շարունակական ուսուցման և կարիերայի առաջխաղացման համար:
- **Թափանցիկություն և բաց գործընթացներ.** կադրային քաղաքականությունն իրականացվում է պարզ ու կանխատեսելի մեխանիզմներով:
- **Մոտիվացիայի և վարձատրության արդար համակարգ.** վարձատրությունն ու խրախուսման մեխանիզմները համահունչ են աշխատակցի ներդրմանը և ցույց տված արդյունքներին:
- **Բարենպաստ աշխատանքային միջավայր.** խթանվում են թիմային աշխատանքը, վստահության և փոխադարձ հարգանքի մշակույթը:


Սույն հաշվետվությունն ամփոփում է 2026 թ. 2-րդ եռամսյակում Ընկերության աշխատակազմի կառուցվածքի, շարժի և մասնագիտական զարգացման վերաբերյալ հիմնական տվյալները:

Աշխատակազմի կառավարումը և մասնագիտական զարգացումը շարունակել են մնալ Շնկերության կարևորագույն ուղղություններից

- Աշխատակիցների ընդհանուր թիվը.
 - 2026 թ. հունիսի 30-ի դրությամբ՝ 354:
- Աշխատակազմի համալրում.
 - Երկրորդ եռամսյակում ընդունվել է 16 նոր աշխատակից:
- Թվային և տեխնիկական աշխատակիցների քանակը՝ նոր կամ վերապատրաստված.
 - հունիսի 30-ի դրությամբ՝ 8:

Գեներալին կազմ և հավասարություն

- Ընդհանուր կազմ.
 - 44,1% կին և 55,9% տղամարդ:
- Կանայք ղեկավար և տեխնիկական պաշտոններում.
 - 12,43%:



Մասնագիտական զարգացում և վերապատրաստումներ

Դասընթացներին, վերապատրաստումներին և արտաքին միջոցառումներին մասնակցել է ընդհանուր թվով **14 աշխատակից**:

Մասնակցությունն ըստ հիմնական ուղղվածությունների ունի հետևյալ պատկերը.

- **Մասնագիտական և ծրագրային հմտությունների զարգացում.**
 - «Excel Full Course» դասընթաց՝ 7 աշխատակից
- **Ռիսկերի կառավարում.**
 - «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) դեմ պայքար և պատժամիջոցների համապատասխանություն» դասընթաց՝ 2 աշխատակից
- **Տեղեկատվական տեխնոլոգիաներ (SS).**
 - «Ցանցային ադմինիստրացիայի հիմունքներ (Level 2)» մասնագիտական դասընթաց՝ 2 աշխատակից
- **Կորպորատիվ միջոցառումներ և ներվորքինգ.**
 - «staff.am Summer Night Out 2026» միջոցառում՝ 3 աշխատակից:

Ֆինանսական վերլուծություն և էական փոփոխություններ

Հիմնական ցուցանիշներ

Ֆինանսական աճի վերափոխում արդյունավետության

2026թ-ին վճարահաշվարկային շուկան շարունակում է զարգանալ ոչ միայն գործարքների թվի և թվայնացման, այլև մրցակցության և ծառայությունների արժեքի փոփոխության ուղղությամբ: ԿԲ-ի վերջին կարգավորումները, օրինակ՝ փոքր բիզնեսի համար 27-Ն որոշումը անկանխիկ վճարումների միջնորդավճարների սահմանափակման վերաբերյալ, ցույց են տալիս, որ շուկայի հաջորդ փուլում մրցակցային առավելությունը պայմանավորվելու է ոչ միայն ենթակառուցվածքի ծավալով, այլև դրա արդյունավետ օգտագործմամբ և հաճախորդներին ավելի որակյալ ծառայությունների մատուցմամբ:

Նաև համաձայն ԿԲ վիճակագրության, թե՛ Երևանում, թե՛ մարզերում տերմինալների նախկինում առկա կտրուկ աճը 2026 թվականի ընթացքում ակնհայտ կանգ է առել՝ շուկայի հագեցված լինելու պատճառով: Ուստի այս պայմաններում Ընկերությունը շարունակում է նախկինում որդեգրած՝ քանակական ընդլայնումից դեպի որակական աճի անցման ռազմավարությունը՝ կենտրոնանալով գործող ենթակառուցվածքի արդյունավետության բարձրացման, առավել եկամտաբեր ուղղությունների զարգացման և ծախսերի օպտիմալացման վրա և, ինչպես նշված է 19-րդ էջում, ռազմավարական հիմնական ուղղություն է դիտարկում օնլայն հարթակի, բջջային հավելվածի և տերմինալային ենթակառուցվածքի ավելի սերտ և թափանցիկ միավորումը:

Առաջին եռամսյակում բջջային օպերատորների հետ հարաբերությունները իրենց հետքը թողեցին նաև 2-րդ եռամսյակի ցուցանիշների վրա: Հաշվի առնելով Ընկերության հիմնական առաքելությունը՝ հաճախորդի հարմարավետությունն և ապահովությունը, 2-րդ եռամսյակի սկզբում գործընկերների հետ ձեռք բերվեց համագործակցության համաձայնություն, ինչի արդյունքում որոշակի նվազեց երկրորդ եռամսյակի եկամուտը, սակայն ապահովվեց հաճախորդների գործարքների իրականացման շարունակականությունը և ծառայություններից օգտվելու հնարավորությունը:

Նույնիսկ Վերահսկողի կողմից գործարքների նույնականացման պահանջների խստացման և Ընկերության առջև ծառացած այլ մարտահրավերների պարագայում Ընկերությունը շարունակում է իր հաճախորդներին տրամադրել ավելի ճկուն և բազմազան լուծումներ:

Եկամուտների և ծախսերի վերլուծություն

Ընկերության գործունեությունը ունի սեզոնայնության բաղադրիչ և վերլուծության համար անհրաժեշտ է ֆինանսական ցուցանիշները դիտարկել նախորդ տարվա համադրելի ցուցանիշների հետ:

Բջջային օպերատորների օգտին 2025 թվականի 1-ին կիսամյակում իրականացվել է 13 մլրդ դրամից ավելի հավաքագրում, իսկ 2026 թվականի 1-ին կիսամյակում այդ ուղղությամբ հավաքագրումը նվազել էր ավելին քան 55 տոկոսով: Այնուհանդերձ, 2026թ. 1-ին կիսամյակի ընթացքում ընդունված վճարումների գումարը կազմել է ավելի քան 435 մլրդ դրամ, ինչ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է ընդամենը 4 տոկոսով:

Ընկերության հասույթը 1-ին կիսամյակում կազմել է 4,8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածի համեմատ նույնպես պահպանելով գրեթե նույն մակարդակը (96%): Վերջինս վկայում է, որ Ընկերությունը, անկախ վերը նշված մարտահրավերներից, կարողացել է ապահովել եկամտաբերությունն առնվազն նույն մակարդակում:

Ծախսերի Էական մաս են կազմում Ընկերության աշխատակիցների աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները: 2025թ. 1-ին կիսամյակում անձնակազմի գծով ծախսը կազմել է գրեթե 1,5 մլրդ դրամ, իսկ 2026թ. 1-ին կիսամյակում՝ մոտ 1,4 մլրդ դրամ, ինչը շուրջ 100 մլն դրամով պակաս է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Էականությամբ երկրորդ ծախսային հոդվածը գործակալներին վճարված միջնորդավճարներն են, որոնք նույնպես օպտիմալացվել են և կիսամյակի կտրվածքով նվազել են գրեթե 283 մլն դրամով նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ:

2026թ.-ի 1-ին կիսամյակում Ընկերությանը տերմինալների տեղադրման, տարածքների վարձակալության գնի վերանայման պահանջ են ներկայացրել թե՛ պետական և թե՛ մասնավոր հատվածները: Նաև այդ պատճառով վարձակալության գծով ծախսը դարձել է երրորդ ծախսային հոդվածը՝ հասնելով 367 մլն դրամի, որը ավել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընդամենը 2 տոկոսով:

Պայմանավորված կիսամյակի ընթացքում բոլոր փոփոխությունների ազդեցությամբ՝ զուտ եկամուտը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 24 տոկոսով՝ կազմելով 408 մլն դրամ (տես էջ 23):

Ակտիվների և պասիվների վերլուծություն

Ստորև ներկայացված է ակտիվների աղյուսակը (մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ՀՀՄՍ հաշվետվությունում, տես՝ էջ 22):

Հազար ՀՀ դրամ	30.06.2026	31.12.2025
Ակտիվներ		
Հիմնական միջոցներ	1,322,292	1,358,051
Ոչ նյութական ակտիվներ	792,048	724,319
Գուդվիլ	1,157,700	1,157,700
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	82,688	128,922
Կանխավճարներ	109,070	31,665
Տրամադրված փոխառություններ	287,684	287,684
Հետաձգված հարկային ակտիվներ	88,468	88,467
Բաժնային գործիքներ (ներդրումներ այլ ընկերություններում)	100,000	
Ոչ ընթացիկ ակտիվներ	3,939,950	3,776,808
Պաշարներ	240,002	234,505
Տրամադրված փոխառություններ	98,333	91,614
Ավանդներ բանկում	161,277	155,326
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,453,235	1,359,471
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,099,238	7,956,035
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	2,813,473	4,012,099
Ընթացիկ ակտիվներ	9,865,558	13,809,050
Ընդամենն ակտիվներ	13,805,508	17,585,858

Հաշվեկշռին առկա դրամական միջոցների մնացորդները և օպերատորներին վճարվելիք կրեդիտորական պարտքերը տարբեր հաշվետու ժամանակահատվածներում կարող են էականորեն տարբերվել՝ հաշվի առնելով Ընկերության գործունեության բնույթը:

2026թ. 1-ին եռամսյակի համեմատ 1.59 մլրդ դրամով աճել են դրամական միջոցները, և համապատասխանորեն 1.56 մլրդ դրամով աճել են կրեդիտորական պարտքերը, ինչը վկայում էմ բնականոն աճի մասին:

Ակտիվների և պասիվների վերլուծություն

Պասիվներում էական փոփոխություններից են.

- առևտրային և կրեդիտորական պարտքերի աճը 1.56 մլրդ դրամով,
- երկարաժամկետ վարկերի և փոխառությունների աճը 0.4 մլրդ դրամով:

Առաջին փոփոխությունը նախորդ էջում նկարագրված է համապատասխան ակտիվների փոփոխությամբ, իսկ երկրորդ փոփոխությունը իրականացվել է շահաբաժինների վճարման պարտավորությունը որոշ բաժնետերերի դեպքում փոխառությունների վերադասակարգելու միջոցով՝ նպատակ ունենալով օպտիմալացնել կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների հարաբերակցությունը, ինչպես նաև՝ ապահովել դրամական միջոցների հոսքերի կանխատեսելի կառավարումը:


Ստորև ներկայացված է պասիվների աղյուսակը (մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է \$ՀՄՍ հաշվետվությունում, տես՝ էջ 21):

Հազար ՀՀ դրամ	30.06.2026	31.12.2025
Վարկեր և փոխառություններ	694,594	683,220
Վարձակալության գծով պարտավորություն	68,669	68,669
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	140,770	139,970
Ոչ ընթացիկ պարտավորություններ	904,033	891,859
Վարձակալության գծով պարտավորություն	46,235	92,469
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	8,073,196	11,494,484
Ընթացիկ հարկային պարտավորություններ	92,334	67,188
Ընթացիկ պարտավորություններ	8,211,765	11,654,141
Ընդամենը պարտավորություններ	9,115,798	12,546,000
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	13,805,508	17,585,858


Փոփոխություններ սեփական կապիտալում

2026 թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Ընկերության զուտ շահույթը կազմել է 277 մլն դրամ, ինչը 147 մլն դրամով ավել է առաջին եռամսյակի զուտ շահույթից: Նաև տեղաբաշխվել է 767 մլն դրամի շահաբաժին՝ որի արդյունքում չբաշխված շահույթը կազմել է 1.87 մլրդ դրամ, որը 157 մլն դրամով ավել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի կուտակված և չբաշխված շահույթի համեմատ:

2025-26 թթ. չբաշխված շահույթի համեմատությունը, հազ. դր.



Կապիտալի կառուցվածքը 30.06.26-ի դրությամբ



*Այս հաշվետվության մեջ գնահատականներն ու համեմատականներն արված են աուդիտ չանցած հաշվետվությունների հիման վրա, ինչպես նաև որոշ ցուցանիշներ ներկայացված են կլորացված արժեքներով, ուստի գումարելիս կարող են հավասար չլինել միասնական ցուցանիշին:

Ռիսկերի բացահայտում

Բիզնես շարունակականություն

Հաշվի առնելով Ընկերության գործունեության ոլորտային բնույթը և կապը ֆինանսական շուկայի այլ մասնակիցների հետ՝ Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների անընդհատությունը կախված է ոչ միայն ներքին համակարգերից, այլև արտաքին գործընկերների՝ բանկերի, վճարահաշվարկային օպերատորների, կապի և տեխնոլոգիական մատակարարների հուսալիությունից: Նրանց մոտ առաջացած խափանումները կամ ծառայությունների դադարեցումները կարող են անմիջապես ազդել գործարքների կատարման և հարթակի հասանելիության վրա: Դրանով իսկ ձևավորվում է արտաքին ռիսկ, որը զսպելու նպատակով Ընկերությունը ձեռնարկում է բավարար միջոցներ, սակայն որոշ դեպքերում ֆինանսական շուկայի կառուցվածքը թույլ չի տալիս ամբողջությամբ կառավարել ռիսկը:

Փողերի լվացում և համապատասխանություն

Հաշվի առնելով, որ Ընկերության հիմնական ծառայությունները մատուցվում են օգտատերերի հեռակա նույնականացման միջոցով՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համատեքստում հիմնական ռիսկը շարունակում է մնալ իրական շահառուի և կեղծ նույնականացման ռիսկը (KYC ռիսկեր):

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ներհատուկ ռիսկերը պահանջում են շարունակական բարելավում և գործարքների մշտադիտարկման, կասկածելի գործարքների հայտնաբերման և օգտատերերի պատշաճ նույնականացման արդյունավետ ընթացակարգերի ներդրում:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՋԱՎԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2026 թ. 3-րդ եռամսյակի համար

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻԽՄՆԱԿԱՆ ՈՋԱՎԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է.

- Ընկերության շահութաբերության աճ
- Telcell Wallet հավելվածի օգտատերերի քանակի պահպանում և աճ
- MyTelcell համակարգի ներդրում և տարածում
- Telcell Էկոհամակարգի միջոցով վճարումների ծավալի աճ
- Թիմի աշխատանքի օպտիմալացում և արդյունավետության բարձրացում
- Շախսերի արդյունավետության բարձրացում

Հաշվի առնելով ֆինանսական շուկայի նոր մարտահրավերները, օրենսդրական և ՀՀ ԿԲ նոր պահանջները՝ վերոնշյալ ռազմավարական նպատակներին հասնելու համար 2026 թ. 3-րդ եռամսյակում Ընկերությունն սահմանում է զարգացման հետևյալ իմնական ուղղությունները.

1. Բիզնեսին ուղղված գործողություններ

- Տերմինալային ցանցի և Telcell Wallet հավելվածի համատեղ MyTelcell հարթակի գործարկում և այդ հարթակի շրջանակներում առևտրային բանկերի հետ համագործակցության ընդլայնում:
- Տերմինալներով դեպի բանկային ուղղություններով վճարումների իրականացման համար նույնականացման նոր գործիքների ներդրում, մասնավորապես imID, ArCa QR և բանկային քարտերով նույնականացման գործիքների ներդրում, որը առավել հարմարավետ կդարձնի Telcell Էկոհամակարգից օգտվելը օգտատերերի համար:
- Գործընկեր բանկերի և վարկային կազմակերպությունների վարկային պրոդուկտների առաջարկների ընդլայնում Telcell Wallet հավելվածի միջոցով՝ ներգրավելով նոր վարկային պրոդուկտներ նշված գործընկերների կողմից:
- Ներդրված բիզնեսի նոր ուղղության՝ Cash Out-ի ակտիվ զարգացում և ընդլայնում:
- Տերմինալային ցանցի օպտիմալացում (ըստ եկամտաբերության) և տարածքների համար վարձավճարների օպտիմալացում:

- Ծառայությունների մատուցման նոր սակագնային քաղաքականության ներդրումը և կիրառումը:
- Մի շարք ռազմավարական պրոդուկտների ուղղությամբ մարքեթինգային արշավների իրականացում

2. Նոր նախագծեր և ուղղություններ

- Ընկերության սպասարկման օղակների թվայնացում և Էկոհամակարգային լուծումների ներդրում, մասնավորապես՝ հեռախոսային կենտրոնի թվայնացում և Telcell Wallet հավելվածում հաղորդակցման արհեստական բանականության կիրառմամբ հարթակի՝ chatbot-ի գործարկում
- Միջոցառումների լիարժեք սպասարկման գործիքների ներդրում և համագործակցության ընդլայնում
- Բջջային հեռախոսների լիցքավորիչների ցանցի ընդլայնում,
- Էլեկտրական մեքենաների լիցքավորիչների նոր նախագծի մեկնարկ
- Visa թվային քարտերի շրջանակներում նոր ծառայությունների գործարկում:

3. Կազմակերպչական գործողություններ

- Նախագծերի իրականացման նոր ձևաչափի՝ թրայբային մոդելի շրջանակներում նոր նախագծերի ներառում և դրանց կառավարում:
- Աշխատակազմի գնահատման մեխանիզմի ներդրում, նոր մոտիվացիոն համակարգի կիրառում և նոր ձևաչափով KPI ների սահմանում
- Տեղեկատվական անվտանգության գերծամանակակից համակարգերի ներդրման գործընթացի շարունակություն:
- Նոր գերծամանակակից սերվերային համակարգի ներդրում: Ծրագրային ապահովման նոր գործիքակազմի կիրառում, որը արդեն Telcell համակարգերի աշխատանքը արագացրել է մոտ 5 անգամ, իսկ աշխատանքի արդյունավետության ցուցանիշը հասցրել 99.89%-ի:

4. Մարքեթինգային և դիրքավորման ուղղված գործողություններ

- Նոր CRM համակարգի կիրառմամբ առավել արդյունավետ մարքեթինգային արշավների իրականացում
- Դրամական փոխանցումների, Visa թվային քարտերի առաջխաղացման և գործընկերների վարկային պրոդուկտների տրամադրման ուղղությամբ մարքեթինգային արշավների իրականացում
- Ընկերության ընկալման, իմիջի ու դիրքավորման փոխակերպում որպես ունիվերսալ և ճկուն ֆինանսական Էկոհամակարգ:

ՖՀՄՍ համախմբված հաշվետվություն

1. Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	30.06.2026	31.12.2025
Ակտիվներ		
Հիմնական միջոցներ	1,322,292	1,358,051
Ոչ նյութական ակտիվներ	792,048	724,319
Գուդվիլ	1,157,700	1,157,700
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	82,688	128,922
Կանխավճարներ	109,070	31,665
Տրամադրված փոխառություններ	287,684	287,684
Հետաձգված հարկային ակտիվներ	88,468	88,467
Բաժնային գործիքներ (ներդրումներ այլ ընկերություններում)	100,000	
Ոչ ընթացիկ ակտիվներ	3,939,950	3,776,808
Պաշարներ	240,002	234,505
Տրամադրված փոխառություններ	98,333	91,614
Ավանդներ բանկում	161,277	155,326
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,453,235	1,359,471
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,099,238	7,956,035
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	2,813,473	4,012,099
Ընթացիկ ակտիվներ	9,865,558	13,809,050
Ընդամենն ակտիվներ	13,805,508	17,585,858

1. Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	30.06.2026	31.12.2025
Կապիտալ և պահուստներ		
Բաժնետիրական կապիտալ	1,220,450	1,220,450
Էմիսիոն եկամուտ	1,405,250	1,405,250
Պահուստային կապիտալ	181,913	181,913
Զբաղիված շահույթ	1,870,208	2,220,356
Ընկերության սեփականատերերին վերագրելի սեփական կապիտալ	4,677,821	5,027,969
Զվերահսկվող բաժնեմաս	11,889	11,889
Ընդամենը սեփական կապիտալ	4,689,710	5,039,858

Հազար ՀՀ դրամ	30.06.2026	31.12.2025
Վարկեր և փոխառություններ	694,594	683,220
Վարձակալության գծով պարտավորություն	68,669	68,669
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	140,770	139,970
Ոչ ընթացիկ պարտավորություններ	904,033	891,859
Վարձակալության գծով պարտավորություն	46,235	92,469
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	8,073,196	11,494,484
Ընթացիկ հարկային պարտավորություններ	92,334	67,188
Ընթացիկ պարտավորություններ	8,211,765	11,654,141
Ընդամենը պարտավորություններ	9,115,798	12,546,000
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	13,805,508	17,585,858

2. Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	I կիս. 2026	2025
Հասույթ	4,783,412	10,353,798
Գործակալներին վճարված միջնորդավճարներ	(1,407,574)	(3,508,047)
Այլ եկամուտ	688,423	1,555,299
Անձնակազմի գծով ծախսեր	(1,360,393)	(3,061,335)
Վարձակալության գծով ծախսեր	(367,410)	(652,239)
Մաշվածություն և ամորտիզացիա	(265,290)	(472,677)
Թույլտվության վճարներ	(370,484)	(627,103)
Ինկասացիոն ծառայություններ	(270,217)	(600,811)
Գովազդի և մարքեթինգի ծախսեր	(169,279)	(433,754)
Աջակցման և սպասարկման ծախսեր	(156,002)	(347,555)
Բանկային ծառայությունների վճարներ	(250,069)	(440,347)
Պարտքային կորուստների գծով ծախս	(4,190)	(90,276)
Այլ ծախսեր	(408,235)	(830,644)
Գործառնական գործունեությունից շահույթ	442,692	844,309
Ֆինանսական եկամուտ	146,416	513,574
Ֆինանսական ծախսեր	(41,066)	(70,747)
Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախս)	105,350	442,827
Շահույթ մինչև հարկերը	548,041	1,287,136
Շահութահարկի գծով ծախս	(139,370)	(294,966)
Տարվա շահույթ	408,671	992,170

3. Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Պահուստային կապիտալ	Զբաղիված շահույթ	Ընդամենը	Զվերա հսկող բաժնեմաս	Ընդամենը սեփական կապիտալ
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,212,750	1,405,250	181,913	2,478,186	5,278,099	11,889	5,289,988
Տարվա շահույթ				992,170	992,170		992,170
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք				992,170	992,170	-	992,170
Սովորական բաժնետոմսերի թողարկում	7,700				7,700		7,700
Շահաբաժիններ*				(1,250,000)	(1,250,000)		(1,250,000)
Հատկացում պահուստին					-		-
Այլ օգտագործումներ					-		-
Գործարքներ սեփականատերերի հետ	7,700	-	-	(1,250,000)	(1,242,300)	-	(1,242,300)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,220,450	1,405,250	181,913	2,220,356	5,027,969	11,889	5,039,858
Տարվա շահույթ				408,671	408,671		408,671
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք				408,671	408,671	-	408,671
Սովորական բաժնետոմսերի թողարկում					-		-
Շահաբաժիններ*				(767,140)	(767,140)		(767,140)
Հատկացում պահուստին					-		-
Այլ օգտագործումներ				8,321	8,321		8,321
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	(758,819)	(758,819)	-	(758,819)
2026թ. հունիսի 30-ի դրությամբ	1,220,450	1,405,250	181,913	1,870,208	4,677,821	11,889	4,689,710

4. Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	I կիս. 2026	2025
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված միջևորդավճարներ	4,190,469	9,873,628
Վճարված միջևորդավճարներ	(1,297,992)	(3,573,275)
Չուտ մուտքեր արտարժույթով գործառնականություններից	629,859	1,427,570
Մուտքեր մատուցված այլ ծառայություններից	512,834	537,003
Ստացված այլ եկամուտ	25,900	70,896
Վճարումներ աշխատակիցներին	(1,335,322)	(3,044,596)
Վճարված այլ ծախսեր	(1,963,409)	(4,043,698)
Ստացված տոկոսներ	146,416	513,574
Վճարված տոկոսներ	(16,253)	(45,333)
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	892,502	1,715,769
(Ավելացում)/Նվազում գործառնական ակտիվներում		
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	1,198,626	325,461
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(80,659)	148,787
Պաշարների փոփոխություն	(5,497)	109,441
Կանխավճարների փոփոխություն	(78,764)	47,704
Ավելացում/(Նվազում) գործառնական պարտավորություններում	-	-
Օպերատորներին վճարվելիք գումարներ	(3,631,494)	989,337
Գործակալների կողմից դեպոնացված միջոցներ	800	(46,557)
Այլ պարտավորություններ	78,734	(10,453)
Չուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից ստացված մինչև շահութահարկը	(1,625,753)	3,279,489
Շահութահարկի վճարում	(117,032)	(476,342)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(1,742,785)	2,803,147

4. Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	I կիս. 2026	2025
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Մուտքեր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից		8,244
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(255,169)	(690,893)
Ավանդի տեղաբաշխում		(162,000)
Ավանդի ելքագրում		162,000
Տրամադրված փոխառություններ	(10,000)	(153,721)
Տրամադրված փոխառությունների մարում		34,656
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(265,169)	(801,714)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերի և փոխառությունների մարում	(683,220)	(1,746,434)
Վարձակալության գծով պարտավորությունների դիմաց վճարումներ	(152,400)	(113,984)
Վճարված շահաբաժիններ		(111,023)
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից		-
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(835,620)	(1,971,441)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	(2,843,574)	29,992
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	7,956,035	7,915,646
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքներ վրա	(4,190)	(22,248)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(9,033)	32,645
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա վերջում	5,099,238	7,956,035

2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն 2026 թվականի երկրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ գեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

**Գլխավոր հաշվապահ
Արթուր Թորոսյան**



Պատասխանատու ֆինանսական հաշվետվությունների մասով

**Գլխավոր տնօրեն
Արտյոմ Ղազարյան**



Պատասխանատու ոչ ֆինանսական հաշվետվությունների մասով

14.08.2026թ.



Սույն հաշվետվությունը պարունակում է ապագային ուղղված հայտարարություններ, որոնք վերաբերում են գործառնական ծավալների ու ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ Շնկերության ընթացիկ սպասումներին և կանխատեսումներին: Այս հաշվետվության մեջ մենք ներկայացրել ենք մեր սպասումներն ու կանխատեսումները Շնկերության ապագա գործունեության վերաբերյալ, որոնք ենթակա են հայտնի և անհայտ ռիսկերի, անորոշությունների և այլ գործոնների, ինչի արդյունքում իրական արդյունքները կարող են զգալիորեն տարբերվել կանխատեսվածներից: Այդ գործոնները ներառում են, բայց չեն սահմանափակվում՝ տեխնոլոգիական փոփոխություններով, կարգավորող դաշտի զարգացումներով, մրցակցային ճնշմամբ և սպառողական վարքագծի փոփոխություններով, որոնցից շատերը Շնկերության վերահսկողությունից դուրս են:

Ուստի՝ սույն փաստաթղթում ոչինչ չի կարող դիտարկվել որպես շահույթի երաշխիք կամ կանխատեսում:

Սույն հաշվետվության մեջ ներկայացված որոշ ֆինանսական տվյալներ հիմնված են Շնկերության ներքին կառավարչական հաշվառման վրա և չեն անցել անկախ աուդիտ:

Հնարավոր են էական տարբերություններ վերջնական աուդիտ անցած տարբերակի համեմատ: Թվային տվյալները կարող են ենթարկված լինել կլորացման և, հետևաբար, որոշ աղյուսակներում և գրաֆիկներում ներկայացված հանրագումարները կարող են չհամապատասխանել դրանց բաղադրիչների ճշգրիտ թվաբանական գումարին:

TELCELL

Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք, 1-ին սեկցիա, 3-րդ հարկ

info@telcell.am +374 60 272 222 +374 60 272 223

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ վերահսկվում է ՀՀ ԿԲ Կողմից: